



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

2013թ. Տարբեր 22 - ի թիվ 5/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՍԱԴՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԱՐԿԱՅԻՆ, ԴՐԱՍԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
«ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ ԻՐԱԿԱՆԱՅՎԱԾ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի
գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Հաստատել Հայաստանի Հանրապետությանը տրամադրված օտարերկրյա
պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային,
դրամաշնորհային և ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին «Ջրային տնտեսության
ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից կատարված ծրագրերի
նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ
հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԶԱՐՅԱՆ



Հավելված
Հաստատվել է ՀՀ ՎՊԻ խորհրդի
2013թ. մարտի 22-ի թիվ 5/2 որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՍԱԴԻՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՏՈՒ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ, ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ՀՀ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ «ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ
ԿԱՏԱՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 21.02.2012թ.-ի թիվ 4/1 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից՝ օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային և դրամաշնորհային միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի ուսումնասիրությունը:

Վերահսկողության առարկան՝ Վերը թվարկված վարկային, դրամաշնորհային և ՀՀ պետական բյուջեի միջոցների օգտագործմանն ուղղված գործարքներն ու ընթացակարգերը:

Վերահսկողության օբյեկտները՝ «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ (այսուհետ՝ ԾԻԳ) և ծրագրերի իրականացմանն առնչվող այլ օբյեկտներ:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 23.02.2012-31.12.2012թթ.:

Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածը՝ 2008 թվականի հունվարի 1-ից մինչև ստուգման իրականացման ժամկետի ավարտը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝

Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել է դիտարկման, ստուգման և վերլուծության ձևը: Դիտարկման փուլում իրականացվել է ԾԻԳ-ից ստացված տեղեկատվության ուսումնասիրություն, ինչի արդյունքների հիման վրա ստուգման փուլում ընտրանքային կարգով հանդիպակաց ստուգումներ են կատարվել «Սպիտակ-1» ԲԲԸ-ում,

«Եղվարդշին» ԲԲԸ-ում, «Արարատշին» ԲԲԸ-ում, «Սահակյանշին» ՓԲԸ-ում, «Խաչհար» ՍՊԸ-ում՝ ՀՀ վերահսկիչ պալատի նախագահի 10.07.2012թ.-ի թիվ 05, թիվ 06, 27.07.2012թ. թիվ 11, թիվ 12 և 04.09.2012թ. թիվ 19 հրամանների հիման վրա: Վերլուծության փուլում ամփոփվել և վերլուծվել են ստուգման ընթացքում արձանագրված փաստերը:

Վերահսկողության արդյունքները՝

Վերահսկողության ընթացքում ուսումնասիրվել են Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Ռոռզման համակարգերի վերականգնման հրատապ ծրագիրը» և «Ռոռզման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիրը:

Երկու ծրագրերով նախատեսված են «շինարարական աշխատանքներ» և «խորհրդատվություն» (նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և շինարարական աշխատանքների հսկողություն) ծախսային հոդվածները, որոնցով դիտարկման փուլում ընդգրկված ժամանակահատվածում կնքված պայմանագրերի արժեքը կազմում էր ընդհանուր 20.4 մլրդ դրամ, իսկ դրանց մասով փաստացի վճարումները՝ 14.5 մլրդ դրամ (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Վերահսկողությամբ ընդգրկված երկու վարկային ծրագրերով նախատեսված ծախսային հոդվածները և դրանց շրջանակներում կնքված պայմանագրերը

մլրդ դրամ

Ծախսային հոդվածները	Պայմանագրերի արժեքը	Կատարված աշխատանքները	Փաստացի վճարումները
Ընդամենը երկու ծրագրերով շինարարություն	19.41	12.60	13.86
Ընդամենը երկու ծրագրերով խորհրդատվություն	0.98	0.62	0.62
ԸՆԴԱՄԵՆԸ	20.39	13.22	14.49

Դիտարկման փուլում կատարված ուսումնասիրությունների արդյունքում, ընտրանքային կարգով հանդիպակաց ստուգումներ են իրականացվել թվով հինգ կապալառուների մոտ՝ «Արարատշին» ԲԲԸ (2 պայմանագիր), «Եղվարդշին» ԲԲԸ (2 պայմանագիր), «Խաչհար» ՍՊԸ՝ (2 պայմանագիր), «Սահակյանշին» ՓԲԸ (1 պայմանագիր) և «Սպիտակ-1» ԲԲԸ (1 պայմանագիր):

Նշված 8 պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմում է 4,421.17 մլն դրամ, որոնց մասով կատարվել էին 4,359.67 մլն դրամի աշխատանքներ: Ստուգմամբ ընդգրկվել են ընդհանուր 986.1 մլն դրամի աշխատանքներ (Աղյուսակ 2):

Կնքված պայմանագրերը և ստուգմամբ ընդգրկված ծավալները

մլն դրամ

Կապալառում	Աշխատանքի նկարագրությունը	Պայմանագրի արժեքը	Կատարված աշխատանքները	Փաստացի վճարումները	Ստուգման ծավալը
1. Արարատշին ԲԲԸ	Թալինի մայր ջրանցքի ՊԿ0+10-ՊԿ30+00 հատվածի վերականգնում	489.66	477.70	477.70	216.38
	Թալինի մայր ջրանցքի ՊԿ30+00-ՊԿ70+28 հատվածի վերականգնում	552.17	536.87	536.87	
Ընդամենը		1,041.83	1,014.57	1,014.57	216.38
2. Եղվարդշին ԲԲԸ	Արմավիրի մայր ջրանցքի ՊԿ111+28-ՊԿ399+00 հատվածի վերականգնում	653.06	651.98	651.98	157.06
	Արմավիրի մայր ջրանցքի ՊԿ87+57-ՊԿ111+28 հատվածի վերականգնում	476.20	473.87	473.87	
Ընդամենը		1,129.26	1,125.85	1,125.85	157.06
3. Խաչիար ՍՊԸ	Թալինի մայր ջրանցքի ՊԿ115+36-ՊԿ160+00 հատվածի վերականգնում	459.80	457.35	457.35	211.99
	Թալինի մայր ջրանցքի աջ ճյուղի ՊԿ0+00-ՊԿ102+46 հատվածի վերականգնում	618.30	617.89	617.89	
Ընդամենը		1,078.10	1,075.24	1,075.24	211.99
4. Սահակյանշին ՓԲԸ	Թալինի մայր ջրանցքի ձախ ճյուղի ՊԿ54+00-ՊԿ170+00 հատվածի վերականգնում	670.13	661.43	661.43	294.74
5. Սպիտակ-1 ԲԲԸ	Թալինի մայր ջրանցքի ՊԿ70+28-ՊԿ115+36 հատվածի վերականգնում	501.85	482.58	482.58	105.92
Ընդամենը բոլոր պայմանագրերով		4,421.17	4,359.67	4,359.67	986.09

Ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումները կազմել են ընդհանուր 49,766.94

հազ. դրամ, որից՝

- ծավալային հավելագրում՝ 2,608.75 հազ. դրամ,
- անորակ աշխատանքներ՝ 47,158.19 հազ. դրամ:

Ստուգման ենթարկված օբյեկտների գերակշիռ մասում *բազմիցս կրկնվում են հետևյալ բնութագրական խախտումները.*

- Նախագծի կազմում բացակայում են նախագծային արաջադրանքը, ընդհանուր բացատրագիրը, շինարարական աշխատանքի կազմակերպման նախագծը:
- Շինարարական աշխատանքները կատարվել են փոփոխված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա, որը մշակվել է համապատասխան շինարարական կազմակերպությունների կողմից՝ առանց համապատասխան լիցենզիայի:
- Փոփոխված նախագծերը փորձաքննություն չեն անցել և սահմանված կարգով համաձայնեցված չեն:
- Շինարարության նորմերի ընդունման մասով.
 - ծածկված աշխատանքների ակտերը կազմվել են թերի, սահմանված կարգի խախտումներով, ամբողջությամբ չեն նկարագրում շինարարական աշխատանքների կատարման տեխնոլոգիական փուլերը,
 - շինարարության վարման մատյանները լրացվել են թերի և սահմանված կարգի խախտումներով,
 - բացակայում են ջրանցքի հատակի խոռոչների տոփանման և հարթեցման ակտերը,
 - հիդրոտեխնիկական բետոնի լաբորատոր փորձաքննության ակտերում նշված չեն ցրտադիմացկունության և ջրաթափանցիկության տվյալները:

Տեղում կատարված ստուգումներից պարզվել է, որ *ջրանցքների որոշ հատվածներում շեղերն ունեն երկայնական ճաքեր, որոնք խիստ կարիք ունեն լրացուցիչ հետազոտման և վերականգնման:*

Թալինի մայր ջրանցքի (ՊԿ0+00 ից ՊԿ102+46 հատված) բոլոր հատվածներն ուսումնասիրելու և մանրամասն զննելու արդյուքնում պարզվեց, որ շրջադարձերի որոշ հատվածում, սխալ նախագծային լուծումների հետևանքով, ջուրը ջրանցքից դուրս է գալիս և ողողում ջրանցքի սպասարկման գոտին:

Վերը նշվածը փաստում է այն, որ շինարարական օբյեկտներում *տեխնիկական և հեղինակային հսկողությունը չի իրականացվել սահմանված կարգին համապատասխան՝* խախտելով ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման մասին» թիվ 44 հրահանգի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.09.1998թ. «Շինարարության նկատմամբ հեղինակային հսկողության իրականացման մասին» թիվ 143 հրահանգի պահանջները:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

- Թվով 8 օբյեկտներում ստուգման արդյունքում արձանագրվել է 49,766.94 հազ. դրամի խախտում, որից՝ ծավալային հավելագրում՝ 2,608.75 հազ. դրամ, անորակ աշխատանքներ՝ 47,158.19 հազ. դրամ:
- Ստուգման ենթարկված օբյեկտների գերակշիռ մասում բազմիցս կրկնվում են նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և դրանց ամբողջականության հետ կապված խախտումները: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի փաստաթղթերը/ակտերը կազմվել են թերի, սահմանված կարգի խախտումներով, որոշ դեպքերում դրանք բացակայում են, սահմանված կարգին համապատասխան չի իրականացվել տեխնիկական հսկողությունը:
- Ջրանցքների որոշ հատվածներում շեպերն ունեն երկայնական ճաքեր, որոնք խիստ կարիք ունեն լրացուցիչ հետազոտման և վերականգնման:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին՝

- Ապահովել ստուգման արդյունքում արձանագրված գումարների վերականգնումը:
- Ձեռնարկել միջոցներ՝ արձանագրված անորակ շինարարական աշխատանքների վերականգնման ուղղությամբ:
- Ապահովել նախագծանախահաշվային, շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում փաստաթղթերի կազմման և տեխնիկական հսկողության աշխատանքների համապատասխանությունը գործող օրենսդրությանը:
- Իրականացնել աշխատանքներ՝ ջրանցքների որոշ հատվածներում շեպերի երկայնական ճաքերի լրացուցիչ հետազոտման և, անհրաժեշտության դեպքում, վերականգնման ուղղությամբ:

«ՀՀ Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի գ) ենթակետի համաձայն, մեկամսյա ժամկետում Վերահսկիչ պալատին տրամադրել գրավոր տեղեկություն՝ հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման վերաբերյալ:

Բացատրություն

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2013թ. մարտի 22-ի թիվ 5/2 որոշմամբ հաստատված ընթացիկ հաշվետվության վերաբերյալ (ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե)

ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումներ և թերություններ	ՀՀ վերահսկիչ պալատի կողմից արձանագրված խախտումների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ (ՀՀ վարչապետի 04.05.2008թ. N 225-Ա որոշում)	Հաշվետվությամբ արձանագրված խախտումների վերացման նպատակով ձեռնարկված քայլերի և դրանց արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն
Ծավալային հավելագրում՝ 2,608.75 հազ. դրամի չափով:	2,608.75 հազ. դրամի չափով գումարը արձանագրված է եղել “Արարատշին” ԲԲԸ և “Սահակյանշին” ՓԲԸ կապալառու կազմակերպությունների մոտ՝ համապատասխանաբար 516.45 հազ. դրամ և 2,092.3 հազ. դրամ չափով:	2,608.75 հազ. դրամի չափով գումարը վերականգնվել են “Արարատշին” ԲԲԸ և “Սահակյանշին” ՓԲԸ կապալառու կազմակերպությունների կողմից՝ համապատասխանաբար 516.450 հազ. դրամ և 2,092.300 հազ. դրամ չափով:
Անորակ աշխատանքներ՝ 47,158.19 հազ. դրամ:	Անորակ աշխատանքներ համարվել են ջրանցքների բետոնապատման ժամանակ շեպերում առաջացած ճաքերը, որոնք հիմնականում եղել են մինչև 3.0 մմ: Ըստ նորմատիվային փաստաթղթերի (СНИП 52-01-2003) բետոնի վրա առաջացած ճաքերի թույլատրելի չափը 0,2 մմ է, որոնք կազմել են ընդհանուրի ճաքերի մոտ 25 %-ը:	Արձանագրված ճաքերը՝ 47,158.19 հազ. դրամ գումարի չափով ամբողջությամբ վերացվել են: ԾԻԳ-ի կողմից ստեղծված հանձնաժողովը տեղում ուսումնասիրել է շինարարական կազմակերպությունների կողմից արդեն վերացված ճաքերը և կազմել համապատասխան ակտ:
Նախագծի կազմում բացակայում են նախագծային առաջադրանքը, ընդհանուր բացատրագիրը, շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծը:	Հաշվի առնելով “Ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագրի” իրականացման անհետաձգելիությունը, մրցույթներն անց են կացվել 2006թ. ՀՄՀ-Հայաստան ծրագրով իրականացված և ստացված նախագծերով, որոնք ներառել են գծագրեր, ծավալների ամփոփագրեր, ինչպես նաև տեխնիկական մասնագրեր: Չնայած շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծը բացակայել է, սակայն տեխնիկական մասնագրերը ներառել են շինարարական աշխատանքների կազմակերպման բաժին:	Թերի և բացակայող մասերը ծրագրի իրականացման ընթացքում հնարավորինս լրացվել են:
Շինարարական աշխատանքները կատարվել են փոփոխված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա, որը մշակվել է համապատասխան շինարարական կազմակերպության կողմից՝ առանց համապատասխան լիցենզիայի:	Շինարարական կազմակերպությունների պայմանագրերի Փոփոխության պատվերները կատարվում են կապալառուի կողմից, այնուհետև համաձայնեցվում են շինարարության վերահսկող կազմակերպության և ԾԻԳ-ի ճարտարագետի հետ: Նման բնույթի նախագծային փոփոխությունների համար լիցենզիայի անհրաժեշտություն չկա:	-
Փոփոխված նախագծերը փորձաքննություն չեն անցել և սահմանված կարգով համաձայնեցված չեն:	Նախագծերի փոփոխման, այսինքն՝ փոփոխված պատվերների կազմման նպատակն է եղել՝ դաշտային աշխատանքների միջոցով ճշտել ջրանցքների փաստացի քայքայվածության աստիճանը, որոշել ծավալները, թեքությունները, որոնցից կախված պետք է ճշգրտվեին ծավալները: Քանի որ այդ փոփոխությունները միայն ծավալային բնույթի էին և չէին վերաբերվում նախագծային լուծումներին, հետևաբար փորձաքննության կարիք չկա:	-

<p>Ծածկված աշխատանքների ակտերը կազմվել են թերի, սահմանված կարգի խախտումներով, ամբողջությամբ չեն նկարագրում շինարարական աշխատանքների կատարման փուլերը:</p>	<p>Ծածկված աշխատանքների ակտերը կազմվել են հիմնականում համաձայն տեխնիկական մասնագրերում ներառված աշխատանքների կատարման բնութագրերի, հերթականության և պահանջների:</p>	<p>Ծածկված աշխատանքների ակտերում եղած թերությունները կվերացվեն հետագա աշխատանքների ընթացքում:</p>
<p>Շինարարության վարման մատյանները լրացվել են թերի և սահմանված կարգի խախտումներով:</p>	<p>Շինարարության վարման մատյանները բաղկացած են երկու մասից, որոնցից մեկը լրացվում է կապալառուի կողմից, մյուսը՝ շինարարության վերահսկողի:</p>	<p>Լրացված մատյաններում կան որոշ թերություններ, որոնք ապագայում թույլ չտալու նպատակով ձեռք են առնվել համապատասխան միջոցներ:</p>
<p>Բացակայում են ջրանցքի հատակի խոռոչների տոփանման և հարթեցման ակտերը:</p>	<p>Հատակի խոռոչների տոփանման և հարթեցման ակտերը ներառվում են հատակի բետոնապատման ծածկված աշխատանքների ակտերում:</p>	<p>Հետագայում այդ երկու ակտերը կառանձնացվեն:</p>
<p>Հիդրոտեխնիկական բետոնի լաբորատոր փորձաքննության ակտերում նշված չեն ցրտադիմացկունության և ջրաթափանցիկության տվյալները:</p>	<p>Հիդրոտեխնիկական բետոնի լաբորատոր փորձարկումները ներառում են ինչպես ամրության, այնպես էլ ցրտադիմացկունության և ջրաթափանցիկության փորձարկումներ: Այդ երկու տեսակի փորձարկումները տեխնոլոգիական և ժամանակային տեսակետից խիստ տարբեր են: Ամրության փորձարկումների արդյունքները տրվում են առանձին, քանի որ շինարարության ընթացքում հնարավոր չէ ստանալ ցրտադիմացկունության և ջրաթափանցիկության փորձարկումներ արդյունքները ամրության փորձարկումների արդյունքների հետ միաժամանակ: Ցրտադիմացկունության և ջրաթափանցիկության մասին տվյալները առկա են և ներկայացվել են Վերահսկիչ պալատի հանձնաժողովին առանձին:</p>	<p>-</p>
<p>Տեղում կատարված ստուգումներից պարզվել է, որ ջրանցքների որոշ հատվածներում շեպերն ունեն երկայնական ճաքեր, որոնք խիստ կարիք ունեն լրացուցիչ հետազոտման և վերականգնման:</p>	<p>Ընդունվել է և կատարվել են համապատասխան հետազոտման ու վերականգնման աշխատանքներ:</p>	<p>Շեպերի երկայնական ճաքերի ուսումնասիրման աշխատանքները կատարվում են ուլտրաձայնային YK1401M սարքավորման միջոցով և ըստ չափագրված արդյունքների տվյալներին համապատասխան, իրականացվում է վերականգնման աշխատանքները:</p>
<p>Թափնի մայր ջրանցքի (ՊԿ0+00-ից ՊԿ102+46 հատված) բոլոր հատվածներն ուսումնասիրելու և մանրամասն զննելու արդյունքում պարզվեց, որ շրջադարձերի որոշ հատվածում, սխալ նախագծային լուծումների հետևանքով, ջուրը ջրանցքից դուրս է գալիս և ողողում ջրանցքի սպասարկման գոտին:</p>	<p>Թափնի մայր ջրանցքի աջ ճյուղի ՆԿ0+00-ՆԿ102+46 հատվածի վերականգնում կառույցի ջրանցքի նախագծային ջրթողունակությունը կազմում է Q=4,03 խոր.մետր/վրկ: Ջրանցքը վերականգնելուց հետո փոխվել են ջրանցքի հիդրավիկական էլեմենտները՝ շփման գործակցի փոքրացման հետևանքով ջրանցքում ջրի արագությունը մեծացել է, որը բերել է ջրանցքում ջրի տրման քանակի ավելացման՝ մինչև Q=5-5.5 խոր.մետր/վրկ: 2012թ. սակավաջուր տարվա որոշ ժամանակահատվածում պահանջվեց ջրանցքով բաց թողնել ավել ջրի քանակ, քան վերը նշված քանակը և այդ ժամանակ հիմնականում ջրանցքի ՆԿ17+40-ՆԿ17+95 հատվածներից տեղի ունեցավ ջրի արտահոսք:</p>	<p>Ներկայումս ջրանցքի այդ հատվածը բարձրացված է և ջրի արտահոսք տեղի չի ունենում:</p>